ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2023-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը՝ մի կողմից և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում գործունեություն ծավալող քաղաքացիական հասարակության կազմակերպությունները՝ մյուս կողմից, այսուհետ միասին՝ Կողմեր,

Հիմք ընդունելով Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակում «Ազդարարման համակարգի վերաբերյալ 2023-2024 թվականների հաղորդակցման գործողությունների համապետական իրազեկման ծրագիրը»,

Հաշվի առնելով Ազդարարման համակարգի և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում փորձառություն ունեցող ոլորտային քաղաքացիական հասարակության կազմակերպությունների բարձր պատրաստվածությունն ու հանձնառությունը,

Բարձր գնահատելով ազդարարման համակարգի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման ոլորտում պետական մարմինների և քաղաքացիական հասարակության մասնագիտական կառույցների ջանքերի համախմբման անհրաժեշտությունը,

Նպատակ հետապնդելով բարձրացնել ազդարարման համակարգի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը հասարակության շրջանում,

Առաջնորդվելով փոխադարձության սկզբունքով միմյանց հետ համագործակցելու Կողմերի ընդհանուր ցանկությամբ՝

Համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Նպատակը

Սույն Հուշագիրը նպատակ է հետապնդում արդյունավետորեն իրականացնել «Ազդարարման համակարգի վերաբերյալ 2023-2024 թվականների հաղորդակցման գործողությունների ծրագրի» բաղադրիչներով նախատեսված գործողությունները՝ բարձրացնելով իրազեկվածության մակարդակը հասարակության շրջանում, խթանելով բարեխիղճ ազդարարումը, ներկայացնելով ազդարարի՝ որպես ազնիվ և օրինապաշտ քաղաքացու կերպարի կարևորությունը և ապահովելով ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը:

ՀՈԴՎԱԾ 2

Համագործակցության շրջանակը

Կողմերը համաձայնում են համագործակցել Հոդված 1-ում ամրագրված նպատակների իրագործման համար՝ ներառյալ, սակայն չսահմանափակվելով հետևյալ ոլորտներով.

ա. ազդարարման ինստիտուտի և ազդարարման համակարգի վերաբերյալ ուղեցույցների և տեղեկատվական մատչելի նյութերի մշակում,

բ. ազդարարման համակարգի վերաբերյալ մասնագիտական քննարկումների իրականացում,

գ. ազդարարման համակարգի վերաբերյալ մասնագիտական և իրազեկման միջոցառումների կազմակերպում Երևանում և ՀՀ մարզերում,

դ. ազդարարման համակարգի վերաբերյալ կրթական ոլորտի համար իրազեկման միջոցառումների կազմակերպում,

ե. ազդարարման համակարգի վերաբերյալ տեղեկատվական տեսահոլովակների, ձգապաստառների, տեղեկատվական վահանակ-մոնիտորների, գրքույկների և մուլտիմեդիա այլ նյութերի պատրաստում,

զ. սոցիալական կայքերում ազդարարման համակարգի վերաբերյալ մատչելի տեղեկատվության տարածում,

է" ազդարարման համակարգի վերաբերյալ տեսանելիության այլ տարրերի պատրաստում և տարածում:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերի հաղորդակցությունը

Սույն Հուշագրի շրջանակում Կողմերի հաղորդակցությունն իրականացվում է նախապես փոխանակված էլեկտրոնային փոստի, ինչպես նաև Կողմերի համար ընդունելի ցանկացած այլ միջոցով:

Սույն Հուշագրի կատարման ընթացքում Կողմերը կարող են նշանակել կոնտակտային անձինք, ովքեր պատասխանատու կլինեն ընթացիկ հաղորդակցության ապահովման համար:

ՀՈԴՎԱԾ 4

Վեճերի լուծման կարգը

Վեճերն ու տարաձայնությունները կողմերի միջև կարգավորվում են երկկողմ բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 5

Ուժի մեջ մտնելը, դադարելը և փոփոխություններ կատարելը

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների կատարումն ապահովելը:

Կողմերի համաձայնությամբ սույն հուշագրում փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր՝ դրան կից արձանագրությունների ձևով, որոնք կազմում են դրա անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնում սույն հոդվածի դրույթներին համապատասխան:

Սույն Հուշագիրը կարող է լուծվել կողմերից որևէ մեկի պահանջով կամ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի դադարեցնելու Հուշագրի գործողությունը՝ դադարեցման ժամկետից առնվազն 30 օր առաջ գրավոր ծանուցելով մյուս Կողմերին:

Հուշագիրը ստորագրվել է Երևանում՝ 2023 թվականի նոյեմբերի 29-ին՝ 8 բնօրինակով:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար

Գրիգոր Մինասյան

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ

Արտակ Սարիբեկյան

«Բոլորը հանուն հավասար Իրավունքների» հիմնադրամ

Ալեքսանդր Մարտիրոսյան

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ

Մուշեղ Հովսեփյան

«ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ

Արփինե Հակոբյան

«Հանուն հավասար իրավունքների» կրթական կենտրոն ՀԿ

Գայանե Աբրահամյան

«Ռեստարտ Իջևան» գիտակրթական ՀԿ

Մելինե Գևորգյան

«Ռեստարտ Գյումրի» երիտասարդական քաղաքացիական կենտրոն ՀԿ

Գևորգ Ղուկասյան